

Թուղիկոսի Աղուանից, Լինաց եւ Չորայ. յորմէ երեւի եւ Չուղ ոչ քաղաքի մի լոկ, այլ եւ աղբ, եւ արդ ժողովուրդը յարանուն գտանեմք զձարդ յայսմ տեղւոջ. իսկ առ Դարբանդու ի հարաւոյ պարսպացն, որ է Աղուանից կողման, բնակէին Թաւասպարք, Մաղքութք, եւ չէ ի դէպ զայն երկիր կոչել Չուլ, այլ զայս՝ որ ընդ մէջս է Կովկասայ եւ Ալազանայ: Օժանդակէ կարծեացս եւ այն, զի ի կողմանս ձարայ գտանին ցարդ բազմութիւն Ուտիացւոց սեփական լեղուաւն, որ յայտ է թէ վասն զի բուն աթոռ էր Աղուանից տեղիս այս, վասն այն մնաց ի սմա ժողովուրդն սեփական: Բայց եւ ի նկարագրին Դարբանդայ լիցին մեզ բանք զՉուլայ. այլ ցանկալի էր հետախոյզ քննութիւն վայրացն յորում համարիմք զաթոռ Աղուանիցն, հզօր աղբի ի հնումն, Թերեւս եւ ի միջին ժամանակս անդ Թազաւորեալ զանուանեալ Թազաւորն Դարբանդայ յՈւռհայեցւոյն¹⁰³:

ԳԱՂԹԱՇԻԱՐՀԻ ԵՐԳԵՐ

ՃԱՄԲԱՆԵՐ

Ճամբաներ կան նեղ եւ անհարթ,
Ճամբաներ ծուռ, քարուտ, ուսկից քալելն է
Տաժանք, մահուան տժգոյն ուղի՛...

Ճամբաներ կան լայն, արքունի.
Արահ ողորկ, ուսկից կառքեր կը սուրան,
Երջանկութեան անդարձ ուղի՛....:

Ճամբաներ կան, ըստուերներէն ըսփոփուած
Սաղարթախիտ սօսերու.
Ուր հեշտօրէն թըռիչք կ'առնէ մարդն հըպարտ,
Առանց վայրկեան մ'հանդչելու:

Ճամբաներ կան օձադալար պըլլըւած
Լեռներու մերկ կողն ի վեր,
Ուրտեղ դաճած, քոսոտ թուփեր թաքթաքուն՝
Կ'ըմպեն փոշին մահաբեր:

Ճամբայ մ'ալ կայ նոճիներու գիրկն ինկած,
Մըռայլ ըստուեր անտառի,
Նրբաշաւիղ արահետ մ'է անխոտոր,
Որուն ծայրը կը բացուի
Անհունի վրայ անծանօթ:

* * *

Եթէ ամէն տեղ նոյն է սա ճամբան՝
Որ միշտ մահուան կը տանի,
Ես կը սիրեմ արեւաբոյր
Իմ լեռնապարն հայրենի:

Եթէ ամէն տեղ կ'ուզեմ լոյս ու ժլպիտ
Քաղէլ՝ սիրող աչքերէ,
Կանաչ աշխարհն իմ զըւարթ,
Մշտադարուն ծիծաղ մ'է:

ԿԱԹԻԼ ՄԸ ՀԱՅ ԱՐԻՒՆ

Կաթիլ մ'անոյշ հայութենէն,
Վէրքէ ծորած արեւն մ'ինչպէս
Ինկած է սա համաշխարհի
Տարածութեան վրայ սարսըռուն
Ովկէաններու յարածըփուն դրկին վրայ:

Հեւքը կ'առնեմ վերջին հայուն,
Որ մեռաւ նոր, հայրենիքէն շատ հեռու,
Ատլանտեանի միւս ափին վրայ,
Կլափին մէջ մարդախոշոշ վիշապին,
Որ կերպարանք ունի մարդու:

* * *

Պատուհան մ'է
Հսկայ հայ Սփիւռքը ահաւոր,
Որ կը նայի անդունդն ի վար,
Ուր հայրենի արեւն հրաշագործ
Ինկած է միշտ իր դենիթէն
Արիւնլըւայ, հըրակարմիր,
Եւ խաւարին մէջ հայութիւնն՝
Տրտում, անդօր
Ինքզինքն անդուլ խարխալելով կը փնտռէ:

Հորիզոն մ'է հրդեհուած
Սփիւռքն հայկական,
Ուր հողին է որ բոցերու մէջ
Կը բըռնկի.
Մարմիններն, ո՛հ, վաղուց արդէն ըստառած՝
Կ'երթան մըռայլ, բաց տօնական բաղմութեամբ,
Գերեզմանոցը հանրական.

Ամէն հայ իր ուսերուն վրայ կը կըրէ
Դադաղ մը սեւ տառերով պոռացող՝
«Թաղուած, անդարձ գեղեցկութիւն»:

* * *

Հայուն սիրտն է որ կը հոսի
Փողոցներէն, ինչպէս թափօրը մահուան,
Որ հոնդիւնով եղերական,
Եւ ծեծուած խուլ մըրիկներէ,
Խառնարանին մէջ մարդկութեան՝
Կը թափառի եւ կը մոնչէ,
Կը ծիծաղի ու կը զոռայ՝
Հեղեղ մ'ինչպէս բարձունքներէն
Թաւալող, կամ գետ մը գեղին ջուրերով,
Մինչեւ հասնի մեռնելու խորն անյայտին,
Որպէս տենդոտ ճիւղ համայնքի,
Եւ կամ ճաճանչ մ'արշալոյսի
Որ գոյն չունի:

ՍԻՐՏՍ ԲԱՇԽԵՑԻ

Կարմիր այդի հազած պերճանքն հըրեղէն,
Ո՛վ մանկութիւն,
Դարձիր ինծի վերստին.
Երազի պէս կը թափէիր ամէն տեղ,
Երբ ցոլբերու փարթամ կամարն հովանի,
Գլխուս վերեւ կը ծաղկէր:

Ձեռքերս հիմա, դողդոջուն,
Հին օրերուն կ'երկարին,
Պաղատանքի հուրն ափերուս մէջ սեղմած:
Արեւելքին ընծայած դոյն ու երազ՝
Գորշ արցունքով թաղած եմ
Վերջալոյսի ծովուն տակ:

Խորհուրդ մ'էր, տենդ, զարկը սրտիս համաչափ,
Համբ, անաղմուկ թաւալում
Տարիներու անիւներով ուժաթափ.

Խնճոյք մէջ մայր արեւն, հողին համբոյրով,
Որ հողւոյս մէջ բացաւ դաշտեր արդաւանդ,
Առանց ցաւի եւ ճիւղի:

Եղբայրացած ես լոյսի՝
Մարդերն համակ դրկեցի լուռ պաշտումով,
Յոյսի զըւարթ շողի տակ:
Հեծող տըխուր աշուններն
Ես ծաղկաղարդ դարուններու փոխեցի:

Աչքերուս դէմ այժմ շուշաններ կը վառին,
Սիրտեր առոյգ հայութեան,
Որոնց համար ձեռքերուս ոյժն ու ծովակ՝
Ըրի ես լաստ փրկութեան.
Եւ սրտիս կեանքն ալ խունկի պէս տոչորուն՝
Անոնց դիմաց վառեցի:

Ափերուս վրայ քանինե՛ր
Սիրոյ համբոյրը խրմեցին ծարաւի,
Հառաչանքներն ես հողւոյս մէջ ծըրարած՝
Տարի մինչեւ ոսկի դռներն երկնքին,
Ու ցաւերէն ստեղծեցի
Ծաղկեալ մայիս վարդերու:

Հեւքը շունչիս խառնեցի
Հիւանդներու լըռիկ ալրող բոցերուն.
Վշտէն կարմիր բաժակներուն՝ իմ շրթներս
Երկարեցի եղբօր պէս,
Եւ բաղուններս եղան նեցուկ ու դորով
Անդունդն ի վար քալողին:

Ու երբ մանգաղն յեղակարծ
Կու դար քաղել կեանքեր՝ հասուն արտերէն,
Մեկնողներու սընարին՝
Ես փորձեցի երգել մահուան մեղեդին,
Որ ցուրտ քամին փոխուէր անոյշ զեփիւռի,
Եւ սարսուռներն՝ աղօթքի,

Որ գէթ հայուն աչքերն յոյսով փակուէին
Հայրենիքին նայելով:

ԻՆԿԱԾ ՀԱՅԵՐ

Յետին շողերն ինկան յողնած արեւին՝
Կատարներուն եւ դաշտերուն լըռակեաց...
Նստած է այժմ խաղաղութեան
Համբոյրն անոյշ
Հողի եւ սիրտ
Գըղուելով:

Վերջին ցոլքն ալ, վերջին վանկին պէս արծաթ,
Հովիտին մէջ մեռաւ տփղոյն, հեաւով:
Կեանքն է հիմա, կարկաշուն դեռ,
Անուրջի պէս
Արտերուն վրայ
Նըւաղուն:

Գիշերն ըրած թաւիշէ բարձ ձեր մարմնոյն
Քնացէ՛ք խաղաղ, ունկնդրելով առուակին,
Եւ հըպած ձեր թոռմած շրթներն
Անոր զուլալ
Ալիքներու
Համբոյրին:

Բամբիշ լուսինը կը նայի հեռուէն,
Հովերու երգը կը հծծէ ու կ'անցնի...
Այդ երգն աղօթք է բաղմաճայն,
Հեծամբունջ
Երազող, լո՛ւռ
Գիշերուան:

Ու խորհուրդն է որ կը թեւէ անսահման,
Օծուած քաղցրութեամբ երանութեան ցողերէն.
Մինչ անհունէն կու դան ձայներ
Եւ կը փարին
Հողիներուն
Տարփաքին:

Հովին հեռ ձեր շունչն է ջերմիկ՝ որ հողւոյս
Խորանին վրայ կեանքի բոցով կ'արծարծի.
Եւ սրտերուն միութեան մէջ

Երկինք տանող
Ուղի կ'ըլլայ
Լուսեղէն:

Հանգչեցէ՛ք հոս, արցունքին տակ աստղերուն
Եւ լըռութեան թեւերուն վրայ անդորրիկ,
Դիւցազներու արե՛ւ կեանքեր
Վերտէօնի, Քերչի.
Ձեր հայութի՛ւնն
Յուշարձան:

ԿԱՐԱՒԱՆՆ Է ՈՐ Կ'ԱՆՑՆԻ

Մահուան չափ մեծ է, եղբայր, մեր վիշտն հսկայ,
Կարաւաններ սուղի անծայր ուղիով,
Անապատներ կը սուրան...
Եկէ՛ք, ափով արցունք խմել աչքերէս,
Ճերմակ ջարդի կարաւանն է որ կ'անցնի...:

Ա՛խ, անարիւն եւ հեշտածոր արչաւանք,
Չորս ծաղերուն հսկող փարոս ա՛լ չըկայ.
Ու մութին մէջ խելացնոր,
Հրդեհներու լեզուներէն բոցաշունչ,
Սէր կը խմենք չամբուշ մահով մեռնելու:

Մենք դահիճներ՝ մեր սրտերուն անյաղութի,
Մենք մեր ձեռքով ալիքներուն կը յանձնենք,
Տըկար մահոյցին հայութեան.
Սեւ ուռիաներ ճակատադրին թող քակուին.
Խնդրեմ, մեղի չունչ, լոյս տըւէք որ ապրինք:

Շըքեղ տաճար մ'ունէինք մենք հընօրեայ,
Տաճար լոյսի, խորհուրդներու դանձարան,
Ո՞վ է քանդեր զայն հիմա.
Հոն խոր, անկեղծ, մեր պապերուն հաւատքով
Երկինքն ի վեր կ'աղօթէինք խաչարարձ:

Յաւն է հիմա, վիշապի պէս՝ դարանած
Ամէն հայու սրտին անկիւն մը ծածուկ,
Խարուած մարդէն ու եսէն.
Օտարութիւնն բազմալեզու վամբիւ մ'է,
Որ մեր կողէն անվերջ արիւն կը ծըծէ:

Ամէն դիշեր, սրահներու մէջ խելայեղ,
Կը փռուի խենթ հոսումը խել խուժանին,
Մորթելու վիշտը քրքել՝
Հայուն կեանքն ալ թերեւս մէկտեղ կը դամուի
Փախչող ժամի սըլաքին հետ հեգնական:

Ամէն դիշեր, հայ բարձունքէն դահալէժ,
Մենամարտի մէջ սրտերու մոլուցքին՝
Հայ մը կ'իյնայ դառիթափ,
Մինչ կ'աղօթէ բազկատարած՝ սրբութիւնն
Հայ մայրերու, հայ լեռներու կողերէն:

ԱՐԻՒՆՈՏ ԵՓՐԱՏ

Յիշեցէ՛ք միշտ Եփրատն արիւն,
Նենդաւոր սիրտ անապատի,
Որ իր մըռայլ ծոցին վըրայ
Տարաւ Հայեր աւազներուն
Եւ ովկեանի խուլ մըռունչին:

Յիշեցէ՛ք միշտ, ո՞վ հայ մայրեր,
Այրող կարմիր աւաղին վրայ
Ինչպէս ձեր սէրն ինկաւ չուշան
Խորշահաւար, եւ յանձնեցիք
Խենթ Եփրատի պղտոր ջուրին:

Եփրատն Հայոց կայտառ դետն էր,
Ժայռեր պատող հուր մըրրիկն էր,
Որ փրփրադէղ, որոտաճայն
Կ'իջնէր լըւալ Միջագետքի
Կողերն արաբ, տրամաթաթաւ:

